



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 օգոստոսի 2020 թվականի թիվ 80-Ա

ք. Երևան

ԹԵՄԱՏԻԿ ՌԻԴԴՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 7-րդ և 44-րդ հոդվածի 7-րդ մասերով` Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները` համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշման դրույթները տարածվում են Հանրային հեռարձակողի և հանրային մուլտիպլեքսի սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթի արդյունքում լիցենզիա ստացած տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների վրա:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈՒԲՅԱՆ

28 օգոստոսի 2020թ.

ք. Երևան

ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ, ԴԲԱՆՑ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն որոշմամբ սահմանվում է տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների կողմից սպառողին ներկայացվող տեսալսողական տեղեկատվության թեմատիկ ուղղվածությունների բովանդակությունը, դրանց հասկացությունները, թեմատիկ տեսալսողական հաղորդումների տեսակները, դրանց բնութագրերը:
2. «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի և տեսալսողական մեդիա ոլորտը կարգավորող օրենսդրության դրույթները վերաբերվում են թեմատիկ տեսալսողական հաղորդումներին:
3. **Թեմատիկ ուղղվածություն**՝ տեսալսողական հաղորդումների ուղղվածությունն է ըստ բովանդակային առանձնահատկությունների:
4. **Թեմատիկ տեսալսողական հաղորդում**՝ տեսալսողական տեղեկատվություն պարունակող նյութ, որը նախատեսված է սպառողների որոշակի խմբի (հատուկ թիրախային լսարանի) համար, և որի շրջանակում տարածվում է միայն մեկ թեմա, կամ տարածվում է միայն նույնական կամ հարակից ժանրեր (կամ առաջարկում է սպառողի անհատական ճաշակին և նախասիրություններին համապատասխան բովանդակություն):
5. Լիցենզիա ստացած տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների կողմից ներկայացվող տեսալսողական ծրագրում մանկական, կրթական, մշակութային և մարզական թեմատիկ ուղղվածության տեսալսողական հաղորդումներին ընդհանուր պետք է հատկացվեն շաբաթական եթերաժամի առնվազն 20 տոկոսը:
6. Տեսալսողական մեդիաձառայություններ մատուցողների լրատվական հաղորդումներում նույն թեմայի վերաբերյալ լուսաբանումը չպետք է գերազանցի տեսալսողական հաղորդման եթերաժամի 25 տոկոսը:

2. ԹԵՄԱՏԻԿ ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7. Թեմատիկ տեսալսողական հաղորդումների չափորոշիչները և դրանց հասկացություններն են՝

1) **Տեղեկատվական տեսալսողական հաղորդում** - ընթացիկ իրադարձությունների (քաղաքականությունից մինչ եղանակի տեսություն) վերաբերյալ կանոնավոր մասնագիտացված և վերլուծական բնույթի տեսալսողական նյութ պարունակող

տեսալսողական հաղորդումներ, որոնք գործնական նշանակություն ունեն և բավարարում են յուրաքանչյուր սպառողի՝ բնակավայրում, երկրում, տարածաշրջանում և աշխարհում կատարվող իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու պահանջարկը.

2) Լրատվական տեսալսողական հաղորդում (լրատվական թողարկում) - տեսալսողական տեղեկատվություն պարունակող, սպառողի համար քաղաքական, սոցիալական, մշակութային կամ տնտեսական հետաքրքրություն ներկայացնող նոր, դեռ ոչ ոքի հայտնի չդարձած, թարմ նյութ, այսինքն՝ տեղեկություններ այն իրադարձությունների մասին, որոնք տեղի են ունենում այս պահին, կամ պահպանել են իրենց արդիականությունը և ազդեցությունը գործընթացների, իրավիճակների վրա: Ըստ իրենց առանձնահատկությունների՝ սովորաբար թողարկվում են օրական մի քանի անգամ (ամենօրյա լուրեր, լուրերի գլխավոր թողարկում, ուղիղ միացումներ, եղանակի տեսություն, պաշտոնական լրահոս և այլն).

3) Քաղաքական տեսալսողական հաղորդում - ներքին իրադարձությունների, ինչպես նաև միջազգային իրավիճակի, երևույթների, փաստերի, տարբեր գործընթացների հետ կապված քաղաքական գնահատականներ, վերլուծություններ և կարծիքներ պարունակող տեղեկատվական նյութ, այդ թվում՝ քաղաքական բանավեճեր, հարցազրույցներ, կլոր սեղաններ, հանրային քննարկումներ, պաշտոնական լրահոս և այլն.

4) Մշակութային տեսալսողական հաղորդում - համամարդկային և ազգային մշակութային ժառանգությանը (պատմության և մշակույթի անշարժ, շարժական և ոչ նյութական ժառանգություն), մշակութային ստեղծագործական և հոգևոր արժեքներին ծանոթացնելու, սպառողի մոտ մշակութային գիտելիքներ, մտածողություն, գեղագիտական ճաշակ ձևավորելու, առօրյայի կազմակերպման մեջ մշակույթի ունեցած դերակատարության մասին հանրային ընկալումների վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելու նպատակով ստեղծված տեսալսողական հաղորդումներ: Մշակութային տեսալսողական հաղորդումների թեմաներն են մշակույթի և արվեստի պատմությունն ու ներկա վիճակը, գրականությունը (այդ թվում՝ գրափրատարակչական գործը), արվեստի տարբեր դրսևորումները (թատրոն, կինո երաժշտարվեստ, պարարվեստ, երգարվեստ, կերպարվեստ և այլն).

5) Կրթական տեսալսողական հաղորդում - գիտության, մշակույթի, արվեստի և հանրային կյանքի ոլորտներում սպառողին գիտելիքներ տալու կամ ուսուցանելու նպատակով ստեղծված տեսալսողական հաղորդումներ: Կրթական տեսալսողական հաղորդման ժանրային առանձնահատկությունները բազմազան են (կրթական-ուսումնական և մասնագիտական-տեխնիկական առարկաների կանոնավոր տեսալսողական նյութեր, պարապմունքներ, վավերագրական ֆիլմեր և այլն).

ա. Ուսումնական տեսալսողական հաղորդում - կրթական և մասնագիտական առարկաներ ուսուցանելու, տարբեր ոլորտներում հմտությունների, գիտելիքների և ունակությունների ձեռքբերման նպատակով ստեղծված տեսալսողական հաղորդումներ, այդ թվում՝ դասախոսություններ, պարապմունքներ, ուսումնական ֆիլմերի

ցուցադրություն, օտար լեզվի ուսուցման նպատակով արտադրված տեսալսողական հաղորդումներ և այլն.

բ. Գիտակրթական տեսալսողական հաղորդում - գիտության, մշակույթի և սոցիալական կյանքի ոլորտներին վերաբերվող գիտելիքներին սպառողին ծանոթացնելու նպատակով տեսալսողական հաղորդումներ, որոնց նպատակն է բարձրացնել նշված ոլորտներում քաղաքացիների տեղեկացվածության, հետաքրքրվածության և ընթացող գործընթացներին մասնակցության մակարդակը (հատուկ մասնագիտական տեսալսողական հաղորդումներ, վավերագրական ֆիլմեր, հարցազրույցներ, տեսալսողական վիկտորինաներ և այլն).

6) Մանկական տեսալսողական հաղորդում - ըստ ձևի և ժանրի բազմազանության, հարմարեցված և հասցեագրված է հիմնականում մինչև 16 տարեկան սպառողին՝ երիտասարդ սերնդի համակողմանի դաստիարակության, կրթության և սոցիալականացման նպատակով: Այս տեսալսողական հաղորդումները բազմազան են, դրանք անիմացիոն և գեղարվեստական կինոնկարներն են, հանրամատչելի գիտական ծրագրերը, տեսալսողական վիկտորինաները, կրթական և ուսումնական ծրագրերը, տեսալսողական հաղորդումների շարք՝ դպրոցական և ուսանողական կյանքի մասին և այլն: Մանկական տեսալսողական հաղորդումները չպետք է ունենան այնպիսի բովանդակություն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա, չպետք է անչափահասներին ուղղակիորեն ներքաշեն ապրանքների կամ ծառայությունների գնման կամ վարձակալության կամ անձի գովաբանման գործընթացների մեջ՝ չարաշահելով նրանց անփորձությունը կամ դյուրահավատությունը.

7) Մարզական տեսալսողական հաղորդում - մարզական իրադարձությունների հեռարձակումների, մարզական լրատվական ամենօրյա նորությունների, սպորտի՝ այդ թվում զանգվածային սպորտի, ֆիզկուլտուրային-առողջարարական, առողջ կենսակերպի քարոզման և մարզիկների մասին, մարզիկների հաղթանակների և պարտությունների վերլուծության մասին տեսալսողական հաղորդումներ, որոնք խթանում են բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի, սպորտի նկատմամբ հետաքրքրության բարձրացմանը, նպաստում սպորտի տարածմանը, առողջ ապրելակերպի արմատավորմանը.

8) Ժամանցային տեսալսողական հաղորդում - նախատեսված են սպառողի հուզական արձագանքի համար՝ կապված հարմարավետության, հանգստի և հաճույք ստանալու հետ: Զվարճալի տեսալսողական հաղորդումները ցանկացած տեսալսողական մեդիածառայություն մատուցողի կողմից ներկայացվող ժամանցային տեսալսողական հաղորդման անբաժանելի մասն է և տեսալսողական մեդիայի զարգացմանը զուգահեռ այս տեսալսողական հաղորդումները հիմնականում կատարում են զվարճանքի և ժամանցի վայրերը լրացնելու գործառույթ: Այս տեսալսողական հաղորդումները շատ բազմազան են՝ գեղարվեստական, վավերագրական ֆիլմերի և տեսալսողական սերիալների ցուցադրում, հումորային տեսալսողական հաղորդումներ, էստրադային և կրկեսային ներկայացումների, համերգների, խաղերի և մրցույթների, երաժշտական-ստեղծագործությունների, երգերի, համերգների և

Երաժշտության մասին ծրագրերի ներկայացում, շոու ծրագրեր, տեսալսողական վիկտորինաներ և այլն: